



1922 - 1996

Սաղիմահայ մեր ազգայիններէն Սեդրակ Պալեան իր մահկանացուն կնքեց Ուրբար-13 Սեպտեմբերին իր բնակարանին մէջ, խոր սուզի մատնելով իր կողակիցը Տիկին Մարին եւ զաւակները Տէր եւ Տիկին Նշան եւ Սիպա, Տէր եւ Տիկին Օհան եւ Ալին Պալեանները, ինչպէս նաև դուստրը Սիլվա՝ եւ ամուսինը Տիար Հայկ Գալաքեանը:

ՌԱԿի էօժէն Բարազեան ակումբի ընկերներուն ինչպէս նաև Հ.Ե.Միութեան անդամներուն փափաշին համաձայն Կիրակի առաւտու ժամը 11ին հանգուցեալին մարմինը բերուեցաւ Հ.Ե.Միութեան Անդրամիկ սրահը, ուր իր ընկերները յարգանենով ծածկեցին ՌԱԿի դրօշակով եւ ընկերներ-ընկերուիններ, սկառուներ, արենոյշներ եւ բարեկամներ լուր իրենց վերջին յարգանեն մատուցին: Երգուեցաւ Միութեան բայյերգը ապա ուսամբարձ տարուեցաւ Մայրավանքի Ս. Յակոբ եկեղեցին կից Ս. Էջմիածնի Մատուռը: Ժամը 12:30ին Ամենապատիւ Պատրիարք Սրբազն Հօր նախագահութեամբ կատարուեցաւ յուղարկաւորութեան արարողութիւնը:

Թմրկահար սկառուներու եւ Միարանութեան շարականներու առաջնորդութեամբը ՀԵՄական ընկերներու, հայ եւ օտար բարեկամներու թափորը յառաջացաւ դէպի Ազգային Ս. Փրկիչ գերեզմանատունը ուր մարմինը ամփոփուեցաւ իր ծնողին դամբարանին մէջ:

Գերեզմանատան արարողութեանէն ետք դամբանական խօսեցաւ ՌԱԿի Աստենադպիր Ընկ. Յակոբ Անդրէասեան:

Հոգեսուրին տրուեցաւ Ժառանգաւորաց վարժարանի Ալեք Մանուկեան սրահը ուր Ենթական ընկերները յայտնեցին իրենց ցաւակցութիւնները իր կողակցին եւ զաւակներուն:

Ընկ. Սեդրակ Պալեան ծնած է 1922ին Երուսաղէմ, զաւակն է հանգուցեալ Տէր եւ Տիկին Նշան եւ Թագուիի Պալեաններու որոնք 1919ին ընկերակցութեամբը Տէր եւ Տիկին Մկրտիչ Գարագաշեաններու, Քէօթահեայէն հրաւիրուած են Երուսաղէմ Օմարի Տաճարին յախնապակիները շինելու համար: Նշան՝ որպէս յախնապակի պատրաստողը, իսկ Մկրտիչը՝ գծագրիչը:

Մկրտիչ եւ նշան Երուսաղեմի մէջ մեծ անուն ունեցած են իրենց բացառիկ գործերով: Միասին Երուսաղեմի մէջ կը հիմնեն իրենց գործատեղին *Palestine Pottery* 1922ին: Աւելի վերջը Ընկ. Սեդրակ կ'ունենայ իր անձնական գործատեղին: Իր արուեստագէտ տիկնոց հետ իրենց յախնապակիի բացառիկ ոճով զարդարած են Y.M.C.A.ի, American Colony Hotelի, Խարայէլի Նախագահի տունը, Sheroverի եւ կարգ մը մեծ հաստատութիւններ: Միշտ բաշալերող եղած է իր արուեստագէտ տիկնոց ձեռնարկները, ցուցահանդեսներ եւս տալով, Երուսաղեմի, Ֆրանսայի, Ամերիկայի Washington D.C.ի Smithsonian Museum-ի մէջ:

Իր ծնողքէն եւ ազգային վարժարանէն ստացած դաստիարակութեամբը մանկութենէն եղած է պարկեշտ դպրոցական, ֆուլքոլիստ, սկառուտ, միութենական կուսակցական: Զինք տեսած ենք մշակութային եւ մարզական ձեռնարկներու մէջ, բեմերու վրայ որպէս մեներգող դերասան եւ վերջապէս ազգային գործերու նուիրեալ մը:

Ընկ. Սեդրակ 1954ին կ'ամուսնանայ Ֆրանսայէն Օր. Մարի Ալեքսանեանի հետ եւ կ'ունենան իրենց զաւակները Սիլվա, Նշան եւ Օհան:

1960ական թուականներուն երբ գործով Ամման կը գտնուէր քանի մը տարուան համար, հոն եւս չխնայեց իր աջակցութիւնը Ամմանի Ա.Մ.Մ.Ի բոյր մասնաճիւղին եւ 1953էն մինչեւ 1968 եղաւ Ատենապետ Ամմանի եւ Ա.Մ.Մ.Ի վարչութեան:

Երուսաղեմ վերադառնալէ վերջ, ան դարձեալ շարունակեց իր ազգային գործունեութիւնը: Մաս կազմեց Երուսաղեմի Ճինհիշեան ֆօնտին Յանձնախումբին եւ իր բարեացակամ նկարագրով միշտ ուզեց օգտակար ըլլալ անոնց որոնք պէտք ունեին:

Իր մահով Սաղիմահայութիւնը կորսնցուց պարկեշտ եւ ազգասէր հայորդի մը, ՀԵՄԸ վաստակաշատ գործիչ մը, ՌԱԿԸ՝ վերերան ընկեր մը:

Օտար հողը թեթեւ գայ սիրելի Ընկ. Սեդրակ: Կը հայցենք միիթարութիւն ազնուաշնորհ եւ արուետագէտ տիկնոցդ որը միշտ բու կողմիդ եղաւ բու բոլոր գործերուդ մէջ: Նոյնայէս միիթարութիւն բու ուղղութեամբ ու գաղափարներովդ մեծցուցած զաւակներուդ:

Ա. Ն.